

ԱԻԵՏԱԲԵՐ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամեն երեքշաբթի: Տարեկան գինն է 1/2, վեց ամսուանը 3/4, մեկինսկի. կանխիկ, և հարկ 60 փարս: Բաժանորդացիները պարտաւորուած են ամսական վճարելու: Երկու տարեկանը 1 ռուբլի: Երկու տարեկանը 1 ռուբլի: Երկու տարեկանը 1 ռուբլի:

ՀԱՏՈՐ 32.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ՝ ՄԱՐՏ 4. 1879

Թի 9

ՌԱԳԱՆԴԱԿԱՆ ԹԻՒՆ

Ուղիղ խոսքեր: — Սուրբ զրոյց պատմութեանը ի տեսչականէ մարտի մինչեւ զինչորս: — Մարտի տոնակ: — Սուրբ զրոյց ընկերական եւ ազգային Միութեան: — Մեծան երկնից ի Ռէքի: — Մերանա-ցանդ: — Կարսի Ք. Ս. Երանայեցեալ Եւանջիլիստի-տար: — Աստուծոյն զրոյցներ: — Հայրենասիրաց ընկերութեան ի հարկեր: — Փայտաւորական լուրեր: — Եւրոպական եւ ասիական:

ՈՍԿԵՂԵՆ ԵՐԱՆՔԵՐ

Կրթութի մը որ բաւական չէ կառա-վարելու զմարդ, չի կրնար երբեք բաւական ըլլալ դանի փրկելու:

Երաւ մարդիկ աշխարհիս վրայ կ'աշխատեն փաշէր ծաղիկներ, վրան նստելու համար:

Պարսկերէն առակ մը միծառան բայց անիմաստ խօսքերու համար կ'ըսէ. «Աղբորոյ ձայն կը լսուի բայց ոչինչ չեմ տեսներ»:

Կրօնական դիտարկման ունեցողները դժբախտաբար կրնան խորհու-րով կարծի լինէ իրօք կրնար ունենալ:

Բարեկարգ լինել արտաքին ազդե-թիւնն այնպէս կը տարբերի Սուրբ հոգիէն ներքինէն, ինչպէս հին եւ փառած առեւ մը բաւել կը տարբերի ասուր փայտաւոր անոր անդ նոր մը չինելէ:

Եթէ անհասարակ կ'աղին համարել զմարդ ինչ իրերու անասուն պիտի մեռնի, պիտի համարեն նաեւ իրերու անասուն աղբերու:

«Ինչ չէի տար» բառ երեւի Անգղիացի մը, զի ինչ կարենայի մայրս մէկ օրուան համար եւս դարձանել աշխարհք, օրպէս զի անոր տան իր-նորով ներսում ինչքէն բարձր այն զործերու համար օրովը վշտացողի անոր աղբիւ սիրտը:

Ստատիկ փորձներ սակայ օգէս կը զուեն գիթիստներու: Եթէ հնոցը եօթնասորսիկ տեղի աստիկ է, եօթնասորսիկ տեղի մարդը կ'ընէ զմեզ:

Որչափ աւելի կը բարձրանային ջրհեղեղին ջրերը, նոյնպիսի աւելի վեր կը վերցանէին աստիկներ իրենց միջանայ վրայ: Այսպէս ներգալիկան հեղեղը օրով աւելի կը բարձրանայ Բրիտանիէն հոգւոյն մէջ, այնչափ աւելի կը մօտենան զանի երկնից եւ յաւիտենական երանութեան:

Կրօնական գաղափարներ յայտնի

Կրթաց ազգիներու անհոգութենէն, անտախտ անուշաւ իրողականութենէ, խորհուրդները եւ հրապարակական պաշտօնը զանց քննելէ, Աստուծոյ Ժո-ղովարդէն եւս կ'ենայի, աշխարհի հետ քննարկութիւն ընելէ, մեղքը ինքնա-բան համարելէ, եւ Սուրբ զիբրերու-դուրը զանց քննելէ, եթէ այսպիսի գաղափարներ մէջ ինչպէս չուտով զջնջում եւս չի դաւանար, այնպիսի իրողութեան կորուստը մատ է:

Դժբախտ ինչուստեղծութիւնն ամենէն տեղի ծանրացնող բանն է այն թիւ-ռաւութեան յաւիտենականութիւն-նը, այնպէս որ հազարաւոր տարիներ տնայնէն ետքը, դժբախտ անմիտներ իբր լինէ նոր պիտի սկսի: Երանի ինչ մեղքս քննելու յաւ մտածելիս այս կէտը, քանզի, ինչպէս որ արքայութեան վաշխաւորները մեր մօտէն վեր են, նոյնպէս են նաեւ դժբախտ մայրը: Ով կրնայ ըմբռնել ինչ ինչ է անվախ-ճան անմիտները:

ՍՈՒՐԵՒԵՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ Ի ՍՏԵՂԻՍՏԱՆԵՒ ՄՈՒՐՈՅ ՄԻՆՁԵՒ ԶՐԶԵՂԵՂ

Թէպէտ ժամանակն ի սակզմանէ մարդայ մինչեւ ջրհեղեղ տեղի քան չարքող մասն է ժամանակին որ ի սակզմանէ աշխարհի մինչեւ մեր օրը, բայց եւ այնպէս այն ժամանակին պատմութեան վրայ ինչ որ ըստած է Սուրբ զրոյց մէջ՝ Մենք զիբրին չորրորդ մասն անդամ չի բաժնի, եւ բոլորը կրնայ կեն ժամանակ մէջ կար-դացուիլ: Ստիպեն եւ այնպէս այս հա-մառում պատմութիւնը կը պարտաւո-կէ բոլոր մարդկային օւղին համար ուշադրութեան արժանի չափ գէշը:

Համառոտութիւն յայտնի այս գէշութե-րէն սմանը:

1. Մարդ տնայնութեան ի պատ-կերի Աստուծոյ, բայց փորձութեան երկնայեցեալ անհնարանող, գրա-նաւորութեան Աստուծոյ եւ կարգիս մեծա-մասամբ այն պատկերը, այնու նաեւ Աս-տուծոյ Հոգւոյն, եւ արտաքինացա զբոխութիւն:

2. Ամենազարմէն Աստուծոյ, ինչի աստու մարդուն գրափութիւն սրտաբա-ման եւ մահու վճիռ, տուաւ միան-գամայն խոստումն ինչ Արամայ սե-րունդէն մէկը պիտի ելլէր որ (կեր-պով մը որ անասուն չյայտնուեցաւ) պիտի խորտակէր բանասերկութիւն զո-րա ինչի, եւ անհնարանողութենէ պատճառաւ ելլաւ որ պիտի նոր-գէր:

3. Մարդայ իսկ եւ իսկ յայտնուե-ցաւ պաշտել իրենց Արարիչը, եւ զոհ մատուցանել, եւ այսպէս ճանչնալ ինչ մեղաւոր եւ կորուսեալ են, եւ զոհ մատուցանելն յայտնուեցաւ մար-դուն ինչ Աստուծոյ մարդասիրտը պիտի ընդունի փոխանակ յանցաւո-րին ուրիշ մը զոհաւոր: Թէպէտ բա-ցարդաբար ըստած չէ այս այն պատ-մութեան մէջ, կրնայ սովորի մեղա-բերուիլ Աստուծոյ քննարկելի Արե-թի պատարագը, եւ կերպով մը նաեւ յայտնելի ինչ ընդունեցաւ: Կր մո-կարեւորի նաեւ այն մարդասեր ընդու-նելալ ինչի զոր բնաւ Աստուծոյ նայի պատարագին անմիտութեան ջրհեղեղին ետքը:

4. Ի կենդանութեան մեր նախա-ծնողաց բարեկարգ մարդիկ յայտ-նուեցան պաշտան կը մատուցանէին Աս-տուծոյ, եւ յայտնի ստորերս ինչի կոր ի մէջ փորձութեան, կամ Սուրբ զրոյց բաւով (Գինգ. 2. 2), որքա-նց Աստուծոյ եւ որքա-նց մարդկան:

5. Երկու մարդ, Ենովք եւ Նոյ, նշա-նաւոր եղան իրենց բարեկարգաւ-թեամբ քննարկութեան արեւոյ ամբարը-ստութեան եւ աղբիւնութեան մէջ, քանզի այն երկու մարդոյ համար եւս ըստած է ինչ Աստուծոյ հետ կը քաղէին, աստի եւ Աստուծոյ յա-ցաղ համար ինչ անհայ հաւատարմու-թեան եւ ծառայութեանը, առեւելով զմին երկնից առեւել ճաշակել տալու մահ, եւ փրկելով զմեզ հանդերձ բնասանութեան տհաւար եւ յանկարծական կորուստին որ եկաւ մարդկային աղ-գին մնացեալ մասին վրայ ջրհեղեղաւ:

6. Բայ ի յիշեալ անհեթէ մարդ-կիւն եւ բանութիւն լինի վերկեր, եւ Աստուծոյ յիշատի ջնջից բոլոր մարդ-կային աղբը ջրհեղեղաւ, պահելով միայն բարեկարգութիւն Նոյի տունը, ըլ-լալ նախահարը նոր մարդկային ազգի մը որ, ինչպէս կը յաւաստուէր, պիտի փախնար Աստուծոյ անոր այս ահեղ պատճառահամի համար:

Այս պատմութիւն գէշութիւն ունե-ցաւ ինչի կրնային կը դառնան ըստ աղ-դերս մէջ որ երկնից չորս ծայրերը կը բնակին: Այս աւանդութեան մէկ սրկնակը պիտի լինէր մեր յայտնի-յօղ աւանքն մէջ:

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Քանի մը շարքի տալ ծանուցիլ ինչ թուրքերէն յեղուաւ Աստուծոյն ինչ թուրքականութիւնը, որը քանի մը տարի-հետէ մեծահաւ ունեցի կը պատարասէին, աւարտած է, եւ Հայերէն գրով տար-գրուած է:

բաւելով սկսած է ծախուիլ: Այս անգամ արտաբերեալ կը ծանուցանեն ինչ նոյն թարգմանութեան Արարիչին գրով տարգրութիւնն ալ թուրքաց համար տարած է: Այս Արարիչին գրով տար-գրուած ալ անի Հայերէն գրով տարգրե-լին գիրքը, զինն ալ է նայելս հն դա-հեկան մէջիցից ինչ ծախուիլ հաստատու-յալիս, ինչի նմանք փողոյ, Ամերիկան ինչի գրաւորները կը դառնան նաեւ բոլոր չրկի գրաւորներու քով: Որչափ հարկ է չաւան պիտի զիբարեւ օրինակներ թուրքաց գրաւորները:

«Արեւ-ստեղծութեան» ինչ ծախուիլ
աղբիւն է:
ՄԻՔ. Գ. 7.



ՍՈՒՐԵՒԵՐՈՅ ԸՆԹԵՐՈՒՄՆԵՒ ԵՒ ԱՐՄԱՆԻ
ՄԻՐՈՒԹԻՒՆ
1879
ՍՈՒՐԵՒԵՐՈՅ ԸՆԹԵՐՈՒՄՆԵՒ ԵՒ ԱՐՄԱՆԻ
Թի

ՍՈՒՐԵՒԵՐՈՅ ԸՆԹԵՐՈՒՄՆԵՒ ԵՒ ԱՐՄԱՆԻ
Սիւնիստի նպատակն այս է որ բոլոր անգամը կարգան Սուրբ զրոյց մի եւ նոյն մասը՝ կարգադրուած խօսքերուն վրայ Աստուծոյ օրհնութիւնը հայցելով, եւ աղօթք լինի իրարու համար: Աստի իւ-րաւորները լինեն:

1. Ամեն որ պիտի կարգայ Սուրբ գի-րէն այն օրուան համար օրհնալ գրաւոր որ մասնաւոր ապիստակի մը մէջ նշանակ-ւած է, եւ

2. Պիտի աղօթի ամեն կիրակի տաւառ Սիւնիստի ընդ անգամներուն համար:

Ունից օր կրնայ անգամայնի Սիւնիստի իւր անունը եւ հոգւոյն, անգամներուն վրայ ծախուցը համար նաեւ հոգւոյն զիբարեւ աւ Սուրբ զրոյց Սիւն-իւն, ի Գ. պոլիս, Ամերիկան ինչի:

Սիւնիստի ընդ անգամներուն ընդ անգամներուն ընդ անգամներուն ընդ անգամներուն:

Գիւն երեք տարի չկայ որ այս ընդ-լուծիւնը հաստատուեցաւ: Ուրիշ մեծա-մեծ ընդլուծութեան այն այս ալ ինչպի-սան չափ փառք էր: Ինչ մը սիրտը եւ կնոջ մը մեծքն էր առաջին շարժաւոր տալ այն տարբ անգամներուն որ իբր փառք ալիք մը երկնայեց տարածեցաւ ընդ պարսի երկրի: Որիորդ մը Լանտի բարեկարգութեան մը կնոջ այցելու-թեան դաւով քանի մը շարքի կեցաւ անոր տունը: Փայտային կիւնը հարցուց անոր օր մը. «Կը կարգան եւ կը սիրեն Սուրբ զիբարեւ» «Այլ» պատասխանեց աղբիւն, «Եւ այն զիբարեւ կարգաւոր հոգ չեմ քննի, վրանք բան մը չեմ հասկնար»:

«Բայց կանոնադրերով կարգացած ես զայն» հարցուց քարոզչին կինը. «Թերեւս կանոնադր կերպով չկարգաւարդ պատճառաւ է որ չես հասկնար: Եթէ կամիս Սուրբ գրոց առաջին գլխին սկսելով մէկտեղ կարդանք ամէն օր մէկ մէկ գլուխ, խնդրելով Հոգւոյն սրբոյ օգնութիւնը:»

Աղջկան համաձայն, եւ քիչ ետքը սկսաւ այնպէս ակորժիլ Սուրբ գրքէն որ երբեք չթողուց ամէն օր Սուրբ գրքէն մէկ մէկ գլուխ կարդալու սովորութիւնը:


Տանը մէջ ուրիշներ, նաեւ քորեկամներէն ոմանք սկսեցին կարգաւ ամէն օր Սուրբ գրոց այն գլուխը զոր վերայիւնաւ անձինք կը կարդային. վերջոյնս տոնոց յարեցան շատ Գրիստոնէայ անձինք այն ժողովուրդէն որոնց հովիւն էր այն տիկնոջ այրը:

Այսպէս ամէն օր Սուրբ գրոց մի եւ նոյն գլուխը կարդացողներուն թիւը բազմանալով եղաւ երկու հարիւր: Անոնք հովիւը խորհելով թէ Սուրբ գրքէն այնպէս կարդալու սովորութիւնը ուրիշներուն ալ օգտակար կրնայ ըլլալ, Սուրբ գրքէն ամէն օր մէկտեղ կարդացող այն երկու հարիւր անձանց առաջարկեց՝ ընկերութեան ձեւ առնել, եւ ուրիշներ ալ հրաւիրել անգամ ըլլալ այն ընկերութեան եւ մասնակցիլ անոր օրհնութիւններուն: Հովիւին առաջարկութիւնն ընդունուեցաւ, եւ ընկերութիւնն Անգլիոյ օրինաց համեմատ կազմուելով կառավարութեանէն ձանցուեցաւ: Այս ընկերութեան իւրաքանչիւր անգամ իրեն դործ ըրաւ ուրիշները յորդորել անդամակցիլ այս ընկերութեան որ շատ մեծցաւ, մինչեւ իր վրայ ձգել կրօնական լրագրաց ուսուցչութիւնը: Անգլիոյ երկու երեւելի համալսարանաց գրեթէ բոլոր ուսանողք եւ ուսուցիչք եղան անգամ, եւ ընկերութիւնը ծովէն անդին մինչեւ Գաղիա տարածուեցաւ, Պատ. Տոգ. Մոնտ բոլոր սրտով եւ անձամբ աշխատեցաւ իւր հայրենակիցներն անդամակցիլ ընել Սուրբ գրոց ընթերցման ընկերութեան, քանզի յիշեալ հովիւը քաջ գիտէր թէ աշխարհքը առաւորելու եւ մարքելու յարմար միջոցներէն եւ ոչ մին կը հաւատարի Աստուծոյ խօսքին, ուստի եւ իրեւ արդարեւ հայրենատէր, ինչպէս նաեւ իբրեւ Գրիստոնէայ, ցանկացաւ փրկել իր հայրենիքը, թշուառ եւ անհաւատ Գաղիա, Աստուծոյ օրհնոց անոր հաւատարիմ ջանքը: Շատ Գաղիացիք գնեցին Սուրբ գրքը առաջին անգամ որպէս զի կարդան զայն կարգաւ եւ շարունակ իբրեւ անգամ այս նոր ընկերութեան:

Ընդ հաւտ Տոգ. Մոնտ Գաղիերէն պատրաստեց անդամութեան գիրք, եւ Սուրբ գրքէն ամէն օր կարդացուելու գլխոց ցուցակ մը, եւ Գաղիացի անգամք արագ բազմանալով, Գաղիոյ մէջ ճիւղ մը կազմեցին Անգլիոյ մէջ հաստատուած ընկերութեան:

Գաղիայէն անցաւ այս ընկերութիւնն ուրիշ Եւրոպական երկիրներ, եւ անկէ ալ անգլին Հնդկաստան, Չին, Ամերիկա, Աֆրիկէ եւ Խաղաղական ովկիանոսի կղզիները:

Ընկերութիւնն արդէն հազարաւոր անդամներ ունէր, երբ այս յօդուածը գրողն առաջին անգամ անոր վրայ կարգաց Սնդղիերէն ամսագրերէն մը մէջ, եւ իրակցն սկսաւ կարգաւ ընկերութեան ցուցակին մէջ որոշեալ գլուխները Սուրբ գրքէն: Գրեթէ ի մանկութենէ իրեն ուսում ըրած էր Սուրբ գրքը, բայց այն



ՄԵԶԵԱՆ ԵՐԿՆԻՑ Ի ԲԷԲԻՆ

անեն Աստուծոյ խօսքէն նոր լոյս եւ զօրութիւն առաւ, եւ հասկցաւ թէ արդիւնք էր այս այն միտքան աղօթող բազմութիւն անձանց, որ խոստում ըրած էին խնդրել Աստուծոյ օրհնութիւնը եւ Հոգւոյն սրբոյ առաջնորդութիւնը ոչ միայն իրենց, այլեւ ուրիշ ու եւ իցէ մարդու համար որ իրենց հետ Սուրբ գրքը կը կարդայ: Քիչ առնելն ուրիշ բարեկամներ համոզուեցան զայլ միտքան կարգաւ Սուրբ գրքը, եւ քանի մը ամսուան մէջ այս յօդուածը գրողը կրցաւ վեց տարեւոր աղքատէ իբր հարիւր հոգւոյ անունները Հոնտոն գրիլ անդամաց կարգը անցունելու: Աստուծոյ երեսուն եւ եօթը Կոստանդնուպոլսեցի Հայ Գրիստոնէայ քոյրեր կ'են, յորոց մին ըսաւ. «Կ'ուզեմ անգամ ըլլալ այն ընկերութեան որ հազարաւոր անձինք պիտի աղօթեն ինձի համար:»

Մտաւ զրկուած նամակի եւ ցուցակի մը միջոցաւ այն քաղքին «Երկտասարդաց Գրիստոնէական ընկերութիւն» կոչուած ընկերութեանէն վաթսուս անուն եւ երեք մէծիւրից եկան:

Ամէն օր կարդացուելու գլխոց ցուցակ մը արդէն տպուած է Հայերէն Կոստանդնուպոլսի, Ամերիկայի խոն, եւ Թուրքիոյ մէջ այս ընկերութեանէն զատ ճիւղ մը հաստատուելու ժամանակն արդէն հասած է: Ո՛վ կ'ուզէ ձեռնարկել այս ազնիւ գործին եւ ըլլալ պատասխանատու գլուխ, Հայ ցեղին մէջ չկայ երկտասարդ Յեսու մը կամ Նէեմիա մը որ յանձն առնու նուիրել իր ժամանակին, զօրութեան եւ տաղանդին մէկ մասը տարածելու համար այս մեծ Միութիւնն իր հայրենեաց մէջ:

Մտածէ որ աւելի քան վաթսուս հազար անձինք ամէն կիրակի առաւօտ, թերեւս աւելի ստէպ, կ'աղօթեն ընկերութեան իւրաքանչիւր անգամին համար: Իրեւ անուշահոտ խոնկերու ամպ այնպէս կ'ըլլեն երկինք անոնց աղօթքները, որ չի փախաւոր որ այնպիսի աղօթողներ ըլլան նաեւ իր երկիրն եւ արդէն մէջ: Այս յօդուածը կարդացող ամէն մարդ պիտի չուզէ այս ընկերութեան անդամաց հետ աշխատիլ կործանել տառնային թաղաւորութիւնը, եւ փութացնել Գրիստոնի թաղաւորութեան գաղաւթան այս եւ ուրիշ ամէն երկիր: Հոնտոնի ընկերութեան անգամ գրողը ընկերութիւն ամիսը հազարը կ'անցնի:

Թուրքիոյ համար Կոստանդնուպոլսի քաղաքն յարմարագոյն է կեդրոն ըլլալու, եւ Ամերիկայի խոն՝ այն կեդրոնին զըլլալու: Եւ Սուրբ թագը: Անուանց ցուցակը եւ թիւը զրկուելու են Ամերիկայի խոն, անդամութեան գրին եւ նամակատան ծա-

խուց համար պահանջուած մէկ մէկ դահեկանով, եւ անուններն անկէ պիտի զրկուին Հոնտոն արձանագրուելու, եւ այսպէս կենդանի կապակցութիւն մը պիտի հաստատուի Մայր ընկերութեան հետ շատ արագ կերպով եւ առանց ծախսոց: Արդ, իցէ թէ չարժէր Աստուծոյ իր ժողովուրդը այնպիսի ընկերութիւն հաստատել Թուրքիոյ ամէն քաղքի եւ գլուխ մէջ ուր Սուրբ գրքը գացած է:

Այսպէս կ'աղօթէ ձեր բարեկամը
ՄԱՐԻԱ Ա. ՎԷՍՊ

ՄԵԶԵԱՆ ԵՐԿՆԻՑ Ի ԲԷԲԻՆ

Բէքին քաղաքը պատեալ է պարսպով մը որոյ չընդհատին է քան եւ չորս մղոն, եւ երկու գլխաւոր մաս կը բաժնուի, Թաթարաց քաղաք եւ Չինաց քաղաք: Երկնից մեհեմեդ մօտ է Չինաց քաղաքին հարաւային պարսպին, եւ մեհեմեդ վերաբերեալ գետինը պատեալ է որովորոյ տարածութիւնն է երեք մղոն, եւ բարձրութիւնը՝ հնգետասուն ոտք:

Այցելու մը դուռնէն ներս մտնելով կը գտնէ զինք մեծ պարտէզի մը մէջ որ քաղաքատակ ձաւարներ ունի հովանաւոր ծառերով: Իր կէս մղոն յառաջ երթալով կու գայ շինուածներու որ քուրմերուն բնակարաններն են: Յետոյ երկրորդ դուռն մը անցնելով կէս մղոն եւս յառաջ երթալով ինքեւ կու գայ երրորդ դուռն մը որմէ ներս ընդունուելու համար թեթեւ տուրք մը վճարելու է:

Գեղեցիկ վրանածեւ մեհեմեդն որ ճիւղ նկարուած է վերի պատերին մէջ, կ'ընտրի թէ շինուած է իրեւ նմանութիւն երկնից կամարին: Այս շէնքն իբր մղոն մը երկայն բարձրաւանդակի մը վրայ է, եւ ունի այլեւայլ կողմերէն սահմանադրեր վեր ելլելու համար: Մեհեմեդ բոլորակ եւ եռա-յարկ է, եւ իւրաքանչիւր յարկ ունի դուռն երկնցած լայն քիւ, որ ծածկուած է կապուտակ կիտուածոյ կղմնորոք: Յարկը միեւնոյն նիւթէն է, եւ ունի վրան մեծ ոսկեղծ գուռ մը: Մեհեմեդն ելլելու համար երկու թեւ ստիճաններ կան սպիտակ մարմարինէ, եւ նոյն նիւթէն ձեւերի մը շէնքին բոլորակը: Մեհեմեդն մէջ կը գտնուի մեծ բազին մը: Մեհեմեդն մօտ կան նաեւ այլեւայլ շէնքեր եւ բազիններ, ուր կը պատրաստուին տարեկան զոհերը զորս կը մատուցանէ կայսրն անձամբ իր ժողովուրդեան համար: Այս երկնից մեհեմեդն շինուածոյն ձեւն եւ եղանակն ազնիւ են, եւ աշխարհիս վրայ ծաղկեալ եւ բարդաւճեալ աղբի մը տրդարեւ արժանի: Գիշերատապէս այս շէնքը հիմա անխոս թողուած է: Սաղարտակին վրայ խոտեր բուսած եւ պարտէզին ձաւարներն անա-

պատ դարձած են. նոյնպէս յարկին գեղեցիկ կապուտ կըղմնորներուն մէջտեղ խոտեր կը բուսնին, եւ այս խոտերուն պատճառաւ յարկը եթէ չուտով չաւորի իսկ, անտարակոյս պիտի կորսնցնէ իր վայելչութիւնը:

ՍԵՐՄԱՆԱՅԱՆԸ

«Եւ անոնց շար քանիք կը սարգէ-ցնէր առանձնով, ու կ'ընէր անոնց իր վարդապետութեանը մէջ. Լուսնէ, ահա սերժ ցանոցը էլաւ որ սերժ ցանէ: Ու երբոր կը ցանէր, զիւր ան-նին ծառնաւ քիչ ինչաւ, եւ խաղաւ-նէրը եկան ու կերան ցանիկա» (Մարկ. Դ. 2-4, Մատթ. Ժ. Գ. 4, եւ Դուկ. Ժ. 5):

Սերմանացանին առաւել ամե-նէն կարեւոր առաւել մին է, միւսներէն աւելի խմաստայից եւ դիւրահասկանալի: Մին է այն առանկերէն, զորս ինքն մեր Տէրը բացատրեց. Այս

առաւել կը ներկայացնէ խօսքին չորս կարգ լոյսներ, եւ իւրաքանչիւր կարգ առանձինն բնարան մը կը կազմէ: Ուստի այս առաւել չորս մասի պիտի բաժնուի, այժմ միայն առաջին կարգին վրայ խօսելով:

Առաւելն առաջին մասը առհասարակ ամէն կարգի լոյսներուն կը վերաբերի: Ամէն պարագայի մէջ սերմը եւ սերմանացանը միեւնոյն են, բայց գետնին է որ կը տարբերի: «Սերմը Աստուծոյ խօսքն է:» Սերմը ցանել կը նշանակէ խօսքը քարոզել, կամ ու եւ կ'երթիւ զայն ուսուցանել. հետեւաւոր սերմանացանը Աւետարանին պաշտօնեայն կամ քարոզչին է:

«Սերմ ցանողը եղաւ,» այսինքն քարոզ-չիք մը եղաւ քարոզչիւ: Որչափ յաճախ այս տեղի կ'անենայ, Ի բաց թողնու ու-րիշ օրերը կամ ուրիշ երկրները, մեր երկրին մէջ ամէն Տէրունական օր ճշգրիտ սերմանացաններ կ'ըլլեն ցանելու: ճշգրիտ քարոզչներ կը կանգնին Աւետարանին բերկրալի լուրերը հոգակելու: Նոցա ցանածը բարի եւ թանկագին սերմ է: Գարուցաց Սուրբ գրոց վրայ տուած բա-ցատրութիւնները թերի են, բայց բնաւ թերութիւն չկայ այն խօսքին մէջ զոր նոքա կը քարոզեն, վասն զի այն խօսքն Աստուծոյ խօսքն է: Գարու մը կրնայ սխալներ ունենալ, բայց բնարանը ան-սխալ է: Ուստի սերմը բարի է. խօսքը թէ եւ մարդէն կը քարոզուի, սակայն Աստուծոյ խօսքն է: Սերմանացաններուն, Գրիստոնի պաշտօնից, բարձր դործն է այս սերմը ցանել, այս խօսքը քարոզել. նոքա հանապաղ այս դործը կը կատարեն:

«Եւ երբոր կը ցանէր, մէկ քանին ծառուս քով ինչաւ:» Այս խօսքերը կը ներկայացնեն անհոգ լուրը, ձաւարուն մօտ եղած հոգը ընդհանրապէս կ'ոխուելով կը կարծրանայ, այնպէս որ սերմը ներս չմտնէր, բայց հոգին երեսը ուր օր ինչած էր հոն կը կենայ: Անհոգ լուրին սիրտը այս հոգին նման է, կարծր եւ ցուրտ, ան-յարմար խօսքը ընդունելու: Անհոգ մարդը եկաւ այն տեղը ուր խօսքը կը քա-րոզուի: Թերեւս ստիպեալ էր դալու. թերեւս եկաւ, վասն զի իր պատիւը կը պահանջէր հոն երթալ, եւ կամ չգալով անհանգիստ պիտի ըլլար: Բայց աղօթատէր ողբով մը չեկաւ, չեկաւ իւր հոգւոյն օգտին համար, չեկաւ լսելու Աստուծոյ իրեն զրկած աւետիսը, չեկաւ իբրեւ ծարուի եւ անօթի արդարութեան, եւ «բանական ու անխաբարի կաթին» փա-փաքելով: Թերեւս մտիկ կ'ընէ խօսքը, բայց իւր լսածին վրայով անհոգ է եւ զայն չըրծածէր իւր անձին համար: Թե-րեւս մտիկ իսկ չընէր, այլ կը թողու որ իւր միտքը ուրիշ առարկաներով զբաղի:

ՔԱՂԱՔԱՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Փետ. 20 ըստ Թուրք. և մարտ 4 ըստ Լուսն. 1879

ՏԵՐԹՈՒԼԻ ԵՐԱՐԵՐ

Արեւելքի քաղաքական դրոշմը յատկութիւններէն մին ալ տալիս որ մինչ լինեցած կը թուին զեւ լինեցած չեն, եւ հետզհետէ երկարեցող բազմաթիւ խնդրոց կերպարանք կ'առնեն : Թուրքիոյ ընդհանուր պարտուց եւ անոնց շահերուն միացման համար Տը Թուրքիոյ մատուցած ծրագիրն ընդունուած եւ արժէքով խնդիրը լուծուած կը թուէր : Տը Թուրքիոյ ծրագիրը մեծ կարեւորութիւն ունէր, քանզի Թուրքիոյ ելեւմտական վարչութեան մէջ մեծ փոփոխութիւն մը կը մտցնէր, նաեւ կ'ըսուէր թէ այս ծրագիրն ընդունուած էր Բ. դռնէն եւ Բարիկի ու Լոնտոնի այն դրամատուներէն որ այս դրոշմն մատնակից պիտի ըլլային, եւ թէ Գաղիոյ եւ Անգլիոյ կառավարութիւնները քանի մը պայմաններով յօժարութիւն ցուցուցած էին իրենց կողմէն երկրորդ անգամ կարգել այն խառն յանձնաժողովը որուն պիտի յանձնուէր անուղղակի արոյ մատակարարութիւնը : Բ. դռնը պաշտօնապէս ծանոց իսկ թէ 200,000,000 ֆրանքի փոխառութիւնն, որ Թուրքիոյ ծրագիրն մէջ ամենէն կարեւոր կէտն էր Թուրքիոյ համար, յաջողած է : Մինչեւ անգամ Տը Թուրքիոյ 5,000,000 ֆրանք դրամ իբրեւ երաշխաւորութիւն ընդունուած ծրագրին գործադրութեանը : Սակայն հիմա Անգլիոյ եւ Գաղիոյ նոր կաղնուելու յանձնաժողովը անգամներ կ'արգելու նկատմամբ զփութարարութիւն կը տեսնեն : Անգլիոյ եւ Գաղիոյ Թուրքիոյ կարօտ գանձուն 200,000,000 ֆրանք փոխ տրուելն արգելել չեն ուզեր, բայց որպէս զի յիշեալ տէրութիւններն իրենց կողմէն անգամ կարգեն ելեւմտական յանձնաժողովը, հարկ կը տեսնեն որ կարգուած անգամները կարող ըլլան բացարձակապէս մատակարարել այն դրամը որոյ մատակարարութեան համար կարգուած պիտի ըլլան : Ուստի եւ Անգլիոյ եւ Գաղիոյ կը պահանջեն որ իրենց կողմէն կարգուած պաշտօնակալը իրենց ամսականներն ոչ թէ Թուրքիոյ կառավարութեանէն այլ իրենց կառավարութիւններէն տանեն, եւ իրենց կառավարութեանց հրամանին ներքեւ գտնուին : Իսկ Տը Թուրքիոյ ծրագրին մէջ յիշուած է որ ելեւմտական յանձնաժողովը Եւրոպացի անդամը Թուրքիոյ ծառայութեան մէջ պիտի մտնեն, եւ իրենց ամսականները նաեւ հրահանգները Թուրքիոյ կառավարութեանէն պիտի ընդունին : Մինչեւ որ այս զփութարարութիւնը չլուծուի, Անգլիոյ եւ Գաղիոյ իրենց կողմէն անգամ պիտի չկարգեն յանձնաժողովը, եւ եթէ յիշեալ տէրութիւններն անգամ չկարգեն, երաշխաւորութիւն չկայ թէ Թուրքիոյ ձեռք պիտի չգտնուի այն դրամին որ յատկացուած է ընդհանուր պարտուց շահերուն : Ուստի եթէ այսպիսի երաշխաւորութիւն մը չըլլայ, Տը Թուրքիոյ ծրագրին արժէք մը չունի :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օսմանեան ծառայութեան մէջ գտնուող Գաղիական զինուորաւոր տեղակալ Մ. Վիթալիոյ եւ Անգլիական զինուորաւոր տեղակալ Մ. Պարզուելը Արեւելեան Րումէլիի ստորկանութեան հրամանատար կարգուած են յիշեալ գաւառին կաղնութեան դործով դարձող յանձնաժողովը կողմէն : — Թուրքի լրագիրը Յունաստանի սահմանագիծը ուղղութեան նկատմամբ դրած մէկ յօդուածին համար 15-ը որ պայմանաժամու հրամանագրութեանէն դադրեցաւ : — Րումիոյ կայսրը շատ ցաւ յայտնած է որ Ազըրբայճանի մէջ Պուլիարաց կողմէն թշնամութիւն եւ անարդարեւ եղած է Յունաց եպիսկոպոսին, եւ հրաման

ըրած է Թուրքիոյն դորապետին յիշեալ զէպիսկոպոսին իստիւ պատժել : — Կարնոյ կուսակալ Իսմայիլ փաշա անցեալ չորեքշաբթի օր հոս հասաւ : — Օսմանեան բանակին հիմնական վերակազմութեան համար միւլիներէն եւ ֆէրիզներէն բաղկացեալ յանձնաժողով մը կազմուած է զինուորական ժողովը նախագահ Ստիվի փաշայի նախագահութեան ներքեւ : — Պուլիարիոյ տաժարանակեայ կուսակալ Տոնտուգոֆ իշխանն որչաժ է Պուլիարական աղբային պանդա մը հաստատել Պուլիար երեւելեաց օգնութեամբ : Սոյն պանդային կեդրոնաւորին Դընտուկ կամ Բուսուգ պիտի լինի, եւ պանդան 5 միլիոն ֆրանք դրամագումար պիտի տեսնուի : — Փետ. 14/26 թուականու Լոնտոնէն զարեւած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Օսմանեան պարտուց կարգադրութեան համար Տը Թուրքիոյ կողմէն պատրաստուած ծրագիրն Լոնտոնի մէջ Օսմանեան արժէքաւոր մէկ ժողովին միաձայն հաւանութեամբ ընդունուեցաւ : — Եւրոպայի եւ Ասիոյ մէջ ընդարձակ հոլեր Թուրքիոյ իշխանութեան ներքեւէն ելլելուն պատճառաւ ի հարկէ կառավարութեան եկամուտը շատ նուազած է : Նաեւ Թուրքիոյ ծրագրին համար ընդհանուր պարտուց շահը հատուցանելու համար կառավարութեան եկամուտէն մաս մ'ալ յապաւել հարկ պիտի ըլլայ : Կը հաշուել թէ կառավարութեան բոլոր ծախսը համար 12 միլիոն լիրա միայն պիտի մնայ : Արդ, եկամտից եւ ծախսից մէջ տեղ հաւասարակշռութիւն պահելու համար հարկ պիտի ըլլայ ծախսը նուազեցնել : Կ'ըսուի թէ գործող բանակին զօրաց թիւը կիսով չափ պիտի նուազեցուի, այսինքն 150,000-ի պիտի իջեցուի : Նաեւ կառավարութեան այլեւայլ պաշտօնարաններուն մէջ կան շատ մ'աւելորդ գործիւններ, որոնց պատճառաւ գործերն աւելի զփութարարութեամբ քան զիստութեամբ կը տեսնուին : Ուստի եւ տէրութեան գանձը կրնայ օգտուի գործիւններուն թիւը պահպանելով : Կ'ըսուի թէ արդէն սկսուած է այս գործը : Որպէս զի այս գործը յաջողի, հարկ է թողուլ այն հին սկզբունքը թէ կառավարութեան ամէն պաշտօնակալ իր բոլոր կենացը մէջ իրաւունք ունի պաշտօնի մը մէջ գտնուելու, եւ թէ կառավարութեան պաշտօն մը կրնայ արուել մէկու մը վանի կարօտութենէ ազատելու համար միայն : — Թուրքիոյ հասարակաց դրոշմը պաշտօնարանը երկաթուղեաց շինութեան մասին օգտակար դաս մ'առնելու է : Աւստրիացիներէն : Տասը տարիէ հետեւ Թուրքիոյ կը խորհէր երկաթուղի չինել Պոնիոյ մէջ : Հինգ ամիս է միայն որ Աւստրիացիք Պոնիոյ մասն են, եւ այս միջոցին սահմանագումարին մինչեւ Մակարի իբր 25 ժամու ճամբայ երկաթուղի չինած են : Յիշեալ ճամբան մարտի վերջը բաց պիտի ըլլայ առեւտուրի համար : — Պուլիարիոյ աղբային ժողովը փետ. 22ին գումարեցաւ ի Դընտուկ : Այս ժողովը կը բաղկանայ 221 անդամ, որոց 108ը իրենց պաշտօնական գիրքին պատճառաւ անգամ եղած են, 92ը ժողովորդէն ընտրուած են, եւ 21ը Տոնտուգոֆ իշխանին անուանուած են : Կ. պոլսոյ Պուլիարներէն ունենք ալ այս վերջիններէն են : Արեւելեան Րումէլիէն եւ Մակեդոնիայէն ալ երեսփոխաններ եկած են, բայց ժողովը մէջ ընդունուած չեն իբրեւ անգամ : Տոնտուգոֆ իշխանը ժողովը բացաւ առեւտրաւորութեամբ մը, յորում ըսու թէ երեսփոխանը կատարելով աղատութիւն ունին խօսելու եւ գործելու : Իշխանի մը ընտրութիւնը ժամանակ մը պիտի յապաղուի, վասն զի աղբային ժողովը նախ սահմանագումարութեան քննութեամբ պիտի զբաղուի :

— Գաղիոյ մէջ տեղի ունեցած վերջին զէպիսկոպոս ծանրակշիւ էին, վասն զի զօրաց եւ խաղաղարարաց մէջ տեղ կուուց մը կերպով առին : Երկուստեք հրացաններ արձակուեցան, եւ քանի մը անձինք վերաւորեցան : Խաղաղ անձամբ ջանաց հանգարեցնել ամբողջ, բայց չյաջողեցաւ, եւ չկրցաւ ամբողջին մէջէն անցնիլ մինչեւ որ գունդ մը զօրք ճամբայ չբացին : Այս գործին հետեւանք կրնայ շատ ծանր ըլլալ : Անգլիոյ եւ Գաղիոյ մէջ կը կարծուի թէ Խաղաղ կ'ուզէ գործելու բացարձակ իշխանութիւն ձեռք բերել : Բայց ոչ Անգլիոյ եւ ոչ Գաղիոյ թիւղ պիտի տան ատր : Յիշեալ տէրութիւններն արդէն մէկ մէկ գրահաւոր նաւեր զրկած են Եգիպտոսի ջուրերը սպասելու : Եփոթութիւնը ծագեցաւ ելեւմտական նեղութեան պատճառաւ, քանզի կառավարութիւնը չկրցաւ հատուցանել այն պաշտօնակալաց ամսականները որոնց ճամբայ տրուած էր : Ելեւմտական նեղութեան սատակութիւնն աւելի զգալի եղած է, վասն զի ինչպէս անցեալ տարի Նեղոսի ջուրերուն չյորդեղուն, այս տարի ալ չափազանց յորդեղուն պաճառաւ երկրագործութիւնը զնաւուած է : — Փետ. 14/26 թուականու Գաղիոյ մէջ զարեւած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Եգիպտոսի զօրաց ընդհանուր հրամանատար եւ Խաղաղ իրաւոր որդին, Հասան փաշա, հորը կողմէն ցաւակցութիւն յայտնած է ելեւմտից պաշտօնեայ, Մ. Ուիլսոնի, փետ. 18-ի զէպիսկոպոսի համար, յորում յիշեալ պաշտօնեայի նախատուեցու պաշտօնէ ձգուած զինուորական մարդոց կողմէն :

ՍՅՈՒՄՆԱԿ

Յունաստանի սահմանագիծի ուղղութեան խնդիրը դեռ անլուծ մնացած է : Միւրոյ մէջ երկաթուղի մը չինելու համար Միւրոյ փաշայի կողմէն մատուցուած ծրագիր մը Բ. դռնէն ընդունուած է : — Սեւ ծովէն Կիպրոս գաղութ նաւաց հրաման չորսուի ճամբորդ հանել ի Կիպրոս : — Գաւառացիք Մահմետական մը կառավարիչ կարգած են Բոսորիքի մէջ : — Գաղիոյ հանդուցեալ Լայսեր, Նաւոլոն Գ. Ի. որդի, Լուի իշխան, Ամբիլիէ գացած է Զուլուներուն պատերազմին հանդիսատես ըլլալու : — Պրահայի թագաւորն իր ազգականներէն 86 անձ սպաննած է, եւ Անգլիոյ կառավարութեան խնդրուած է միջամտութիւն ընել : — Թուրքիոյ եւ Րումիոյ մէջ տեղ վերջնական դաշնագրութեան կնքուելուն առթիւ մեծ հանգիստ կատարուեցաւ Րումիոյ մէջ : — Գաղիոյ մէջ արմատական դարձեալ առաջարկած են դատաստանի ենթարկել Մ. Տը Պոլիսի պաշտօնէն թիւն որ 1877, մայիս 16ին յաջորդեց ժիւլ Սիմոնի պաշտօնէնութեան :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ'ըսուի թէ Բեդրաստիկի Անգլիական նորընտիր ղեկաւոր Լորտ Տը Բիլիի հրահանգ տրուած է նորոգել այն համաձայնութիւնն որ Կեդրոնական Ասիոյ խնդրոյն նկատմամբ դրոշմաց էր Րումիոյ եւ Անգլիոյ մէջ տեղ : Այս համաձայնութիւնը դրոշմաց էր սո հիման վրայ թէ Րումական զօրքը պիտի չանցնէին Ոգոսս դետն, եւ Րումիոյ իր աղբայներէն պիտի չտարածէր Աֆղանիստանի վրայ : Հաւանական է թէ Աֆղանիստանի հողէն մաս մը Անգլիոյ ձեռքն ինկած ըլլալուն համար առջի համաձայնութեան մէջ փոփոխութիւն ըլլայ, բայց պատճառ չկայ կարծելու թէ Աֆղանիստանի խնդիրն երկու կողման համար զոհաբերուցի համաձայնութիւն մը գոյանալուն արդիւք ըլլայ : Աֆղանիստանի մէջ Անգլիական զօրքը դարձան գաղութեան կը սպասեն : — Րումիոյ մէջ Նիկիոյ կողմէն հա-

տարակական դարձեալ ուշադրութիւն դրուել սկսած են Խաղաղի կառավարիչ, Կարապետի իշխանը սպաննել փորձելով : Յիշեալ իշխանը շատ ծանր կերպով վերաւորուած ըլլալով կը կարծուի թէ պիտի մեռնի : — Քանի մը տարիներէ հետեւ Չինացիք մեծ խաղաղութեամբ Ամերիկայ դադարել սկսած են : Չինացիք Ամերիկայի մէջ հետապնդող մեծ հեռանկար կը չինեն, եւ իրենց հետապնդող սովորութիւնները կը պահեն : Քանի մը գաւառներու մէջ Չինացիք թիւն բուն Ամերիկացիք թիւն անցնիլ կը սպասուի : Այս պատճառաւ այն գաւառներուն մէջ զօրաւոր հակաթիւն կայ Չինացիք դադարակալութեան դէմ : Ամերիկայի ազգային ժողովը մօտեւ օրէնք մը հաստատեց որ նաուց մէկ անգամին տեղի քան 15 Չինացի Ամերիկայ բերելը կ'արգելէ : — Գերման ԼՈՒՐԵՐ Երբեք մեծ կարգաւ իտէն փաշա Վիլհելմի Օսմանեան զեկապան անուանեցաւ : — Թայմը լրագիրը կ'ըսէ թէ Րումիոյ Եւրոպական տէրութեանց չլծարեալիս թուրք մը գրկելով Պալատներու Օսմանեան զօրաց կողմէն գրաւուելուն, եւ Արեւելեան Րումէլիի, Գաւառացի եւ Րումիոյ նոր սահմաններուն վերջնական կերպով որոշուելուն վերաբերեալ խնդրոց լուծումը պահանջած է : — Արտաթագաւոր կոչուած ամբողջիւնը գրաւող Րումիոյ ըստ դաշնագրութեան Պերլինի ամբողջութիւնները քանդելու կը դադարեն : — Կ'ըսուի թէ Անգլիոյ եւ Գաղիոյ պիտի պահանջեն Խաղաղի որ յանձն առած բարեկարգութիւնները կատարէ : — Աֆղանիստանի միւր, Շիր Ալի խան, մեռած է : Կը կարծուի թէ Եագուս խան Շիր Ալի խանի պիտի յաջորդէ, եւ պիտի շարունակէ արտերազմը : — Ստոյնիստանի մարտ 1 թուականու զարեւած հեռագիր մը կը ծանուցանէ թէ ժամտարար լայնորովն անհետ եղած է : — Վաղըթ լրագիրը կ'ըսէ թէ Արեւելեան Րումէլիի կազմութեան յանձնաժողովը պայմանաժամ որոշուած է մինչեւ յառաջիկայ տարիի վերջը : Այնուհետեւ տէրութեանց գործակաւորարդ պիտի ցրուին : — Յունաստանի ամայն սկզբները Զէյթունի բնակիչներէն ունենք Զէյթունի կառավարիչին զէմ գտնուող ունենալով ստորկաններուն հետ կուսեցան եւ անոնց զէպիսկոպոսներէն ետքը կառավարիչն եւ ստորկանները վաւերացին, նաեւ կառավարութեան անուկը կաղնայեցին եւ բանալը քանդուցին : Ասոր վրայ Մարաշի մէջ բանակ մը ժողովուրդու Զէյթունիները պատժելու համար, բայց իբրեւ Անգլիական հիւպատոսին խնդրանքը բանակը Զէյթունի երթալ արգելուեցաւ, եւ իբրեւ կառավարիչ Մարաշ բնակող Ամերիկացի միսիոնարներն Մ. Մարտինէն խնդրեց Զէյթունի երթալ զփութարարութեան լուծումը մը առաւ համար : Ուրախութեամբ կը լսենք թէ Մ. Մարտին յաջողած է իր պաշտօնին մէջ եւ Զէյթունիներուն հաղապարհութեան մաղապատ մը կնքել տուած եւ ստորկաններէն առնուած հրացանները նաեւ ուրիշ բաներն անոնցմէ ետ առած է : Ասոր փոխարէն Գրիստոնեայ մը Զէյթունի առժամանակեայ կառավարիչ կարգուած է, եւ կուսակալ խոստացած է Զէյթունի հարկերը հաւաքելու եղանակը բարեփոխելու :

ՄԵԼԵՏԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏԱԿԱՆ			
Փետ. 19 և մարտ 3, 1879			
Գանալիւն	14.	Իրաւ, երկաթ, բամբակ	40. 50
ԳՐԱՄՔ, Փոս. լիրան 100 էն			
Մեքիսիկ	407	Բուսիոյ բոլ	80 1
Թղթարար	430	Նարդիւն	87 1
Պղնձ ստակ	483	Գրիսից	51
Հիւնից	122 1	Անգլ. լիրա	109 1
Սանէթ	10		

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն
Խաղաղի ձ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐԱԹԻՒՆ ԱՐԱՄԵՆ
2ազմագնդար, Յակոբեան խան, Թիւ 12.